

տպարանէն, որոնց ամէնքը Հ. Տէրտէրեանի գործէն շատ առաջ տպուած են ինչպէս պիտի տեսնենք ստորեւ:

(1) ԹՌԻԱՐԱՆՈՒԹԻՒՆ, գրաբար և ընդարձակ:— Հեղինակ՝ Հ. Սուքիաս Աղամալեան: — Տպեալ, 1781, էջ 511 + 17 (Աղիւսակ նշանակաց հասարակ թուոց 1 էն մինչեւ 10,000, վեց տասնորդական թուով): Այս գիրքը ճշմարտապէս հոյակապ գործ մըն է, և 528 էջերով կը բացատրէ և բազմաթիւ օրինակներով կը լուսաբանէ թուաբանութեան տարրական և բարձրագոյն մասերը: Գործը բաժնուած է երկու գրքի: Ա. գրքին մէջ, Հ. Աղամալեան չորս գործողութիւնը մանրամասն բացատրելէ յետոյ, 97 էջին վրայ կը սկսի կոտորակներու և անոնց գործողութեանց նոյնչափ մանրամասն բացատրութիւնը: Հատուած Գ. կը սկսի Համեմատութեամբ և կը գրաւէ 75 էջ, ուր կը մեկնաբանուին ուղիղ և խոտոր համեմատութիւն, ընկերութեան, յարակցութեան, միակ և կրկնակ դրութեանց կանոնները, բազմաթիւ օրինակներով լուսաբանուած: Ընթերցողին գաղափար մը տալու համար, առնենք օրինակ մը 239 էջէն, ուր հեղինակը կը խօսի Յաղագս յանդիման առեւտրոյ զիտարդախոտիւն ոսկերչիկն ի րազն Հերովմի արքայի: Պատմի զՀերովմէ արքայէ Սիրակուսայ, թէ ետ շինել թագ մի ոսկի ի ձօնել զիցն: Իսկ ոսկերիչն որ շինեաց զայն՝ գողացաւ յոսկւոյ անտի և խոսնեաց ընդ այնր զարծաթ: Այլ Արքիմեդէս չափաբանն քաջ յանդիման արար զդաւաճանութիւն նորա, բայց թէ որով արուեստի առանձին, չէ յայտ լիով: Ասեն, թէ արար երկուս զանգուածըս, ըստ կշոյց և ըստ ծանրութեան թագին. զմինն ի մաքուր ոսկւոյ և զմիւսն ի յտակ արծաթոյ: Եւ գերեօին զայնոսիկ, այսինքն զթագն և գերկոսին զանգուածն, արկեալ ուրոյն ուրոյն յանօթ լի ջրով, քննեաց զգուշութեամբ զՂուրն, որ ելանէր զեղանէր արտաքս յանօթոյ անտի յարկանել անդ զերաքանչիւր գնոսա: Եւ ծանեաւ աստի թուաբանական հաշուովն, թէ որչափ ոսկի կայր ի թագն, և որչափ արծաթ խոսնեալ: Այս պատմականն ընելէ յետոյ, Հ. Աղամալեան կը նուիրէ ոչ նուազ քան հինգ էջ մանրամասն բացատրելու համար արքիմեդեան սա հըռչակուոր խնդիրը: Կարելոր է հոս յիշատակել որ սոյն խնդրոյ միջոցով Արքիմեդէս գտաւ տեսակարար ծանրութեան կարելոր սկզբունքը:

Իբրորդ Հատուածին վերջ տրուած է ՅԱՆՅՆՈՒՄՈՒՄ մը (էջ 245-293), ուր չորս գլուխներու մէջ հեղինակը կը խօսի առեւտրական հաշիւներու մէջ

գործածուած 11 խնդիրներու վրայ՝ տալով իւրաքանչիւրի լուծումը: Իբրեւ օրինակ տանք խընդիր ժա. (էջ 291). «Յորենավաճառք երկու բարձեալ տանէին ցորեանս ի վաճառել, առաջինն ի նոցանէ ունէր չափս 28. Իսկ երկրորդն ունէր չափս 22: Ի հանդիպիլ նոցա մաքսաւորին, իբրեւ չունէին դրամս ի վճարել զմաքսն, ետուն նմա նոքա իւրաքանչիւր՝ փոխանակ դրամոյ՝ մի մի չափ ցորենոյ: Եւ քանզի զին իւրաքանչիւր չափու՝ աւելի էր քան զմաքսն, հատոյց անդրէն մաքսաւորն առաջնոյն ի նոցանէ՝ փարայս 4. Իսկ երկրորդին հատոյց փարայս 19: Արդ խնդրի նախ, թէ որչափ ինչ էր մաքսն առ իւրաքանչիւր բոլոր ցորենոյն, և երկրորդ՝ թէ որչափ ինչ էր զին իւրաքանչիւր չափու»:

Գ. ԳԻՐԲԸ չորս հատուածի բաժնուած է (էջ 293-511): Առաջինին նուիրուած են վեց գլուխ, ուր աւելի լայնօրէն կը բացատրուին թիւերու մասերը և անոնց տեսակները (նախնական, բաղադրական, զոյգ, անզոյգ, մակարդակ, կայուն քառակուսի, խորանարդ, կատարեալ և ոչ կատարեալ): Այս անուններէն ոմանք, թէպէտ չեն գործածուիր ներկայ թուաբանական գործոց մէջ, պատմականօրէն և տեսականօրէն կարելոր են. և կ'արժէ ուսումնասիրել զանոնք: Հեղինակը նոյն հատուածի մնացեալ չորս գլուխներուն մէջ կը բացատրէ քառակուսի և քառակուսի արմատ, խորանարդ և խորանարդ արմատ, լուսաբանելով ամէն պարագայ շատ մը տեսական ու գործնական խնդիրներով: Անկէ յետոյ կու գան համեմատութեան աւելի դժուարին ու տեսական մասեր, ինչպէս նաեւ թուաբանական ու երկրաչափական համեմատութիւններ:

Նոյն Գրքի հատուած Բ. կը շարունակէ Յառաջատուութիւնը վեց երկար գլուխներով (էջ 364-445) և կը պարունակէ շատ մը տեսական ու գործնական խնդրոց լուծումը: Սոյն հատուածին վերջը կը գտնուի (էջ 440-455) Արքիմեդեան ուրիշ պատմական խնդիր մը, ուր Հ. Աղամալեան, երկրաչափական յառաջատուութեան զարմանալի յատկութիւնը ցոյց տալու համար, կը հաշուէ աւազներու թիւր երկրի, և «յերկրէ մինչեւ ցհաստատութիւն, այսինքն է՝ մինչեւ ցկամարն աստեղաց» (էջ 446): Տես նաեւ Արքիմեդէսի  $\Phi\alpha\mu\mu\epsilon\tau\eta\varsigma$  (Աւագահամար)

ՀԱՏՈՒՄ Գ. կը խօսի կատարեալ և բազմակիւն թիւերու, զուգադրութեանց և փոխադրութեանց վրայ (էջ 445-488): Կատարեալ և բազմակիւն թուոց ուսումնասիրութիւնը կարելոր է պատմականօրէն և տեսականօրէն. դժբախտաւ